թած են Սև Ծովու և Կովկասի հիւսիսային կողմէն, և ի Փոքր Ասիա հաստատուած։ Ըստ Լէմանի Կիմմերեանք կամ Գամիրք երեք անգամ մուտք գտած են ի Խաղղիա, նախ՝ առանձինն, երկրորդ Թրակացւոց հետ, և երրորդ Բեթացւոց հետ, որոց դրացի էին Փոքր Ասիոյ մէջ եղած ատեններին։ Շատ ակար են իր այս կարծեաց իբր ապացոյց փաստերն։

Շարայարելի

---

կաւ, Վօլկան և Տօնն անցնելով Կիմմերեաններն հալածեց։ Կիմմերեանց մի մաս Խրիմի թերակղզին ապաստանեցաւ ու այն տեղւոյն տուաւ իր անունն, սակայն մեծ մասն ըստ ոմանց Տնիբեր և Դանուբ գետերն անցնելով՝ Վոսփորի նեղուցէն Ասիա անցաւ, ու ըստ Հերոդոտի և այլոց Կաւկասիոյ լեռնաշղթայի ստորոտն քերելով և Սև Ծովու եզերքն հետևելով եկան այդ ծովու հարաւային եզրն։ Ըստ Վինքլէրի Կովկասեան լեռներէն անցան, ու երկրի բնակիչներն երկուքի բաժնեցին, մին դէպ արևմուտք և միւսն հարաւ արևելք մղելով։ Կովկասի ճամբով գալուստնին աւելի հաւանական կը թուի այժմ։ Կիմմերեանք Կուրի աւազանն մտնելով Ուրարտեանց և Մաննացւոց զարնուեցան և Սարգոնի բանակէն հալածուեցան (720)։ Կիմմերեաններն հալածող Սկիւթացիներն Արաքսի արևելեան աւազանն հաստատուեցան, դրացի Ուրարտեանց և Մաննացւոց ու Ասքանազեանց ծնունդ տուին։ Իսկ Կիմմերեանց մեծ մասն հաստատուեցան Սև ծովու եզրերն ի Պոնտոս, ի Պափլագոնիա, ի Բիւթանիա, են։ Սինոբն և Հերակլէան իրենց մայրաքաղաքներն էին։ Թրակիայէն 710ին ատեններն Վոսփորի ճամբով եկող Թռէյոներու միացան, ու Փռիւգիոյ տիրեցին։ Կապադովկիոյ վրայ ալ գացին՝ որ ենթակայ էր Ասորեստանեայց, սակայն Ասուր Հատտոնէն յայնկոյս Ալիսի մղուեցան (678), Լիւդիոյ վրայ ալ գացին ու Սարդոնն առին կողոպտեցին (652), Մագնիսեան այրեցին, Եփեսոսն պաշարեցին։ Ապա Սկիւթական արշաւանքին զարնուելով անոնց հետ խառնուեցան ու ծանօթ արշաւանքն ըրին մինչ Եգիպտոս, և ապա Կիաքսարէն հալածուեցան Սկիւթացւոց հետ։

Ըստ Ցիմմերի գերման գիտունին սոքա կը ներկայացնեն հին պատմագրաց ոմանց Գամիրքն, որք երկրագործ ու այգեպան էին, և ըստ Ստրաբոնի մասնաւոր լեզու մ'ունէին։ Սեմացւոց նըման կը թլփատուէին, խոզի միս չէին ուտեր, մեհենից մէջ պաշտօնական կուսապղծութիւն կը կատարէին, Գամրաց երկիրն ապա Ա. Հայք անուանուեցաւ։

# ՆՈՐԱՅՐ ԲՈՒԶԱՆԴԱՑԻ

## Եւ «Դահեկան»ի ստուգաբանութիւնը

Բազմավէպի նախորդ թուին մէջ անհաւանական նկատած էինք Հիւպշմանի այն կարծիքը՝ որու համեմատ Դահեկան բառը յառաջ եկած է Դահ (Տաս) արմատէն, և զայն համեմատած էինք Darique (Դարեհ-ական) դրամին հետ՝ որուն յիշատակութեան հանդիպած էինք Ա. Խաչի «Հին հայերու պատմութիւն» ֆրանսերէն գործին մէջ։

Տէր Նորայր Բուզանդացի իր Բառարանի թղթատեալ օրինակին մէջ ցոյց տուաւ ձեռագիր դիտողութիւն մը՝ որ անտարակուսելի կ'ընէ թէ վերջին ստուգաբանութիւնը աւելի ընդունելի է։

Նա կը գրէ Darique բառի առջև. «Ոսկի դահեկան նախնի պարսից. Դարեհական. La darique d'or valait environ dix-huit francs cinquante-quatre centimes de notre monnaie». Տէր Նորայրի ձեռագիր յաւելուածը ի մէջ կը բերէ Աղեքսանդրի Պատմութեան (Վենետիկ, 1842) հետևեալ պարբերութիւնը. «Արդ զամենայն զոսկի և զարծաթ հրամայեմ զի վարեալ լիցի ի ձեռն այնոցիկ՝ որ ի գաւառս և ի քաղաքս մեր բնակեալ իցեն և դահեկան զոր ունի ամենայն ոք պարգևս իւրաքանչիւր մարդոյ ի կիր ծախուց ըստ կամաց իւրոց արկանել»։

Տպագրիչները կը յայտարարեն՝ թէ բ. օրինակը՝ Դահեկան բառի տեղ ունի Դարեհական, ինչ որ կ'ապացուցանէ թէ առոնք համազօր էին։

Այսպէս Դահեկան բառի նկատմամբ կ'ունենանք երկու ստուգաբանութիւն։

Վերջինը աւելի հիմնեալ է։

Տ.

---

Արդի հեղինակներուն շահերը. — Յաջողութեան երկրպագու Անկլօ-Սաքսոնները՝ անուն ունեցող հեղինակներու գործերուն յօժարակամ ամենաբարձր գիներ կը վճարեն, ինչպէս օրինակի համար, Թայմզ, իր 80,000 բաժանորդներուն համար, առիպուած է՝ ինչ գնով ալ ըլլայ՝ գնել 10,000էն աւելի օրինակներ ճանչցուած հեղինակի մը գրքէն՝ իր բաժանորդաց պահանջներուն գոհացում տալու համար։

Ռոպէրդ Լուի Ստեվէնսըն՝ որ 1894ին մեռաւ՝ բառ գլուխ 60 սանդիմ կ'առնէր, մինչդեռ Քիփլինկ Captains Courageous վէպին ամէն մէկ բառին համար 1 ֆր. 25 սանդ. կը վճարէր Օրտեարտ Քիբլինկի. և Սիր Արդուր Գոնան Տոյլ իր Sherlock Holmesի վերջին շարքին ամէն մէկ պատմութեան համար՝ 18, 750 ֆր. որ է ըսել բառգլուխ 3 ֆր. 75 սանդիմ կ'առնէր։

Ստրանտ Մակազին կը հաստուցանէ Վէլսին՝ իր երևակայական պատմութեանց իւրաքանչիւր հազար բառին 765 ֆր. և ամերիկեան հրատարակիչները Տիկին Հըմֆրէյ Ուորտի վէպերուն հարիւր հազար բառին՝ ուրոշած են քառորդ միլիոն ֆրանք։

Եւ ըսել որ Միլտոնի և զուցէ արդի դիւցազներգակ բանաստեղծութեան գլուխ գործոցը՝ Դրախտ Կորուսեալը՝ հինգ ստէռլինի գնուեցաւ։

digitised by A.R.A.R.@